

Եւ սպա առեալ հանէ զաշակերտսն 'ի լեառն ձիթենեաց, եւ կրկնէ նոցա զբանն . « Երթայք յաշխարհ՝ ամենայն, մըկըրտեցէք զնոսա » : Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց, տալով նոցա զկատարեալ շնորհս առաքելութեան, եւ ինքն մեկնեալ 'ի նոցանէ վերանայր յերկինս այնպէս սքանչելի եւ անհաս իմն օրինակաւ, որպէս եկեալն էր յաշխարհ : Եւ Առաքելոցն երկրպագեալ դարձան յԵրուսաղէմ սպասել աւետեացն Հօր ըստ բանի վարդապետին իւրեանց . (33) :



Փ Լ Ո Ւ Խ Բ .

Պապուս Հոգւոյն Սրբոյ . Հաստատութիւն Եկեղեցւոյ . եւ հալածումն նորին : Յակօբ առաջին կտիսկոսոս Երուսաղէմի եւ թուղթ նորին . Պիղատոս, գլխատուէն Յակոբայ . Հերովդէս Ազրիպպա :

ՅԵՏ ընտրութեան Մատաթիայ 'ի թիւ երկուսասնից, յորմէ անկաւ Յուդա, սպասէին առաքելոք եւ աշակերտք եւ Աստուածամայրն հանդերձ կանամբք 'ի վերնատան անդ, ըստ բանի Տեառն, զգենուլ զզօրութիւն 'ի բարձանց : Եւ զկնի տասն աւուր վերանալոյ Փրկչին յերկինս, եղև յանկարծակի հնչիւն յերկնից իբրև սաստիկ հողմոյ, եւ ելից զտունն բովանդակ, յորում նստէին : Էջ ամենասուրբ Հոգին Աստուծոյ, եւ 'ի կերպարանս հրեղէն լեզուաց նստաւ 'ի վերայ ամենեցուն որք ժողովեալ էին անդ, եւ խօսէին յայլ եւ այլ լեզուս, եւ ամենայն ազգք ժողովեալ 'ի տօնին՝ իմացեալ սքանչանային : Եւ քարոզութեամբ Պետրոսի հաւատացին 'ի Քրիստոս արք 3000 : Այսպէս հեղմամբ Հոգւոյն Սրբոյ ա՛ռ զառաջիկան Հաստատութիւն Եկեղեցի, եւ տեւականութիւն վասն ամենայն ժամանակաց : Միաբան հաւանութեամբ ընտրեցին Առաքելաբն զեօթն Սարկաւազունս 'ի սպաս սաշտաման այրեաց :

Ընդ սքանչելիս բժշկութեան կաղին մուրականի, եւ ընդ համարձակութիւն քարոզութեան Առաքելոցն 'ի Տաճարին, զայրանալ սկսան Փարիսեցիքն եւ Սադուկեցիք